


ՏԱՋԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ


Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՄԱՅԻՍ 1911

ԹԻՒ 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Հայ կեանքը	ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
Ս. ԳԻՐԲԷՆ ՅՈՒՔԵՐ. — Երեւոյս բաները	ԱՌԱՋՆՈՐԴ
ԾԱԾՈՒՄՆ ԵՔՐ. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ. — Սամուէլ. —	ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ
Մարգարէից Դպրոցները	Մ. ԱՐԲԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ
ՕՐՈՒԱՆ ՏՕՆԸ. — Հոգեգալուստ. — Լեզուաց շնորհքը	Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ
Հին ԷջեՐ. — Աղօթք առ Ս. Հոգին	
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրերը	



Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ
Սուրբան-Հանամ Մօրա-Թաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ



“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺՎԱՆՈՐԴԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պոլսոյ եւ Գալաթաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Անգլիա	» 2 ֆուլար
Զեմէ կը գնալու պահիր	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի պատանալու

ԲԱԺՎԱՆՈՐԴԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒԹՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

« ՏԱՃԱՐ » ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ Զարմայր Քանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غزنه سى مديرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արսէն Քէնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍՍՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Քէնյ. Գա-

րիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-

ղոս Վրդ. Գաթիթեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Քէնյ. Պողար-

եան

ԱՖԻՕՆ ԳՐԱՄԱՆԻՍԱՐ. — Տ. Խաչատուր

Ա. Քէնյ. Տօնէլեան

ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ Բարդէն Եպս.

Կիւլէսէրեան

ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քէնյ. Սար-

դիսեան

ԵՕԶԳԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.

Դիմաքսեան

ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Քէնյ. Թորոսեան

ԶՄԻՒՌԻԱ. — Տ. Յարութիւն Քէնյ. Տ.

Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ Քէնյ. Տ.

Դաւուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.

Սաատէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքապեան

ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Քէնյ.

Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քէնյ. Վարժա-

պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Քէնյ. Պիպիեան

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քէնյ.

Տատեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէնեան

ՊԱՆՏՐՄԱ-ՊԱՆԴՔԵՍԻՐ. — Առաջնորդ Տ.

Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.

Եպիսկ. Կէօմբիւքճեան

ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Քէնյ. Մըրջ-

նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ. Տ. Գէորգ Ծ.

Վրդ. Ասլանեան

ՍՍՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.

Օտապաչեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.

Թէոփիլէ Քէնյ Օտապաչեան

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-

պետ Քէնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քէնյ. Տրէզ-

եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան

ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Քէնյ. Թէրզեան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմա-

պուհ Քէնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պոսկ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քէնյ. Դերձակեան

ՖՐԷԶՆՕ. — Շակոբ էֆ. Նչկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 20

ԽՐԱՍԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Յաւազին, արիւնոտ, վէրքերով լի կեանք մը՝ Հայուն կեանքը, արցունքի հովիտ մը՝ իր բնավայրը, Հայաստանը, դրախտաման, հիանալի երկիրը, որ մեր փառայեղ նախնիքներու աշխարհայեցողութեան օրերէն ետքը, միջին, վհատեցնող կեանք մը կը քաջքէ երկար, երկար դարերէ ի վեր, իր հողերուն վրայ սփռուած տեմեկով մահը՝ իր ամենէն ճիւղալայն, վայրագ, արիւնոտ երեւոյթին տակ, այն արգասանդ հողերուն, արգասաբեր դաշտերուն վրայ որոնք մըլիւրներով ժողովուրդներու կեանքը ստեղծանելու, կեանքեր ունեցնելու, հանճարներ երեւան բերելու չքնաղ յատկութեամբ օժտուած են:

Լուրը Բաղէշէն կուգայ այս անգամ: Նորընտիր առաջնորդ Տ. Սուրեն Թ. Վ. Գալէմեան դժնդակ պարագաներու տակ կ'սնցնի գաւառի առաջնորդութեան մը գլուխը: Հագիւ հասած իր սլաշածնատեղին, սպանու-

թեանց ահոելի շարքի մը առջեւ կը գտնէ ինքզինքը, արդիւնք անվերջա. նալի հարցի մը՝ հողային խնդրոյն, որ իր կարգին կսկծացող վերք մըն է, Հայուն կողմէ վրայ բացուած: Խուլի Նաղուանկ գեղացի քահանայ մը՝ իր երկու ընկերներով չարաչար կը սպան. նուին էլքի աշիւթէն Խօթը վայրագ փռուցներու կողմէ, որոնց դէմ դատ բացուած էր, մինչ նոյն օրն իսկ Մուշի կիւլիւսայէք Լեւոն վրայ նոյն քահանային զաւակը եւ իր չորս Հայ ընկերները խժգժօրէն կը սպաննուէին ուրիշ փռուցներու կողմէ: Սարսափը, յուզումը համակած է ամբողջ գիւղացիները, տիրող ծայր աստիճան անապա. հով կացութեան հանդէպ: Եւ Բաղէշի առաջնորդը կը փութայ աւելցնել որ եթէ հարկ եղածն անմիջապէս ի գործ չդրուի, առաջքը չի կրնար առնուիլ:

Դէպքն այնքան ստույգ ու պոռացող հանգամանք մը ունէր, որ հայ հանրային կեանքը խորունկ յուզման մատնող տխուր իրողութիւնը պարտկելու, խնդիրը փակելու ջանքեր չեղան տեղային կառավարութեան կողմէ: Ագգային Պատրիարքարանին, եւ Օսմ.

խորհրդարանի Հայ երեսփոխաններուն կողմէ կառավարութեան մօտ եղած դիմումները ապարդիւն չմնացին : Պա. անբազմախան հախարար Շէվքէթ փա. շա Հայ երեսփոխաններու պահանջու. մին վրայ՝ թէ պէտք է հրահանգ. արուի Գ. զօրաբանակի հրամանատար. րութեան, հարկ եղած, չափ վնասուր դնելու Պլիլիսի կուսակալին արաբա. դրութեան տակ, Ն. վսեմութիւնը խոստացաւ պէտք եղածն ի գործ դը. նել : Եւ ստուգել, Ներքին գործոց պաշտօնատունէն հաղորդուեցաւ թէ հեռագրուած է Բաղէշի կուսակալին եւ զինուորական հրամանատարին, եր. կու վաշտ զինուոր զրկել ոճիրը սա. սահած տեղը, եւ իսկոյն մարդաս. պանները ձերբակալելով բանտարկել. միեւնոյն ատեն հեռագրուած է Բաղէ. շի դատական իշխանութեան, որ քըն. նութիւնն ու դատաստանն իսկոյն կա. տարուին եւ արդիւնքը հաղորդուի Պո. լիս :

Կը նկայ գիտնալ թէ տեղային իշ. խանութիւնք ո՛ր աստիճան փութկո. տութեամբ պիտի կատարեն կեդրոնին հրամանները, տեղային աղբեցութիւն. ներ չալիով աշխատին չեղքացնել ա. մէնէն արդար ու ամենէն օգտակար հրահանգները :

Բայց ժամանակ է որ ա՛լ ուշագ. րութիւն դարձուի Հայաստանին, որ թուրքիոյ արեւելեան սահմանա գըլ. խուն վրայ ամենէն փափուկ կէտ մը կը բնէ : Ուրայն երբ որ թուրք մամուլն ալ արձագանգ կ'ըլլայ հայ հանրային կարծիքին, խոստովանելով դէպքին ճշմարտութիւնը, եւ շեշտե. լով արագ սնորհիւնութեան մը պէտքը : Ժոսն Թիւրք արձագանգ կ'ըլլայ հայ շրջանակներու մէջ տիրող բուռն յու. գումին, հայ քահանային եւ իր զաւ. կին, միեւնոյն օրուան մէջ ոպանումը արդիւնք կը նկատէ կանխամտածու.

թեան, եւ նոյն իսկ կառավարութեան շահուն տեսակէտով կը պահանջէ ու. շաղրութիւն դարձնել հայ թերթե. րուն կողմէ նշանակուած իրողութեանց վրայ : Թագմիսնաքի խմբագրատե. ւութի Թիքրի պէյ, որ միեւնոյն ժա. մանակ Տէրօրմի երեսփոխան է, աւելի առաջ կ'երթայ. այդ կողմերը դէպ. քերու կրկնուելէն ու բազմապատ. կուելէն կը հետեւցնէ թէ կառավա. րութիւնը բարոյական ուժ չունի այլ եւա, եւ անիշխանութիւնն է որ կը տիրէ, ինչ որ ամենամանր վտանգ մըն է երկրին խաղաղութեան :

«Պալատէն մինչեւ Թաօի նեղուցը Ռուսիոյ եւ Պարսկաստանի սահմանա. գլխուն վրայ իրարու հակընդդէմ այնչափ ցեղասպաններ կան, որ իթէ ասոնք ան. քամ մը հասկնան թէ կառավարութիւնը ուժ չունի, իսկոյն իրարու հետ կռիւի եւ բաղխումն պիտի սկսին, եւ ամբողջ սահ. մանապէս ժէկ ծայրէն միւսը կրակի հեղեղի մը մէջ պիտի խղզուի. այս կրակի պատուհասը անանկ քանի մը վաշտ զին. ուսը զրկելով չի մարիր» :

Թուրք թերթը այո՛ ոճով կը շա. րունակէ, մասնանշելով սահմանա. գլխուն վրայ Ռուսիոյ ունեցած զօրեղ դիրքը, շօսենք, բոքազանաւորները, զինուորները եւն., եւ աւելցնելով որ այդ կողմերը խռովութեան մը իը. րեւ բնական հետեւանք, աւելի մեծ դժբախտութիւն մը յառաջ պիտի կրնայ գալ, այն է ռուսական միջա. մասութիւն մը : Եւ կ'եզրակացնէ.

«Արեւելեան հասանդներուն հայիւն այն տեղի խաղաղութիւնն եւ անդորրու. թիւնն ապահովել, ժողովուրդը իր պատ. ուոյն, անձին եւ գոյքին բացարձակ տէրը դարձնել է Մէկ խօսքով Ասիական թուր. քիան պաշտ պանել՝ ամբողջ Օսմ. երկիրը խաղաղեցնել ըսել է Կարգ մը սահմա. հագծի եւ հողային վէճերու, եւ անձնա. կան իրաւունքի դատերուն յետաձգումէն ծագում առնող ականջ ոճիրները եթէ

կրկնու ին եւ ընդարձակու ին, անդորրութիւնը լազարձակապէս պիտի վրդովուի, եւ առաջըը չտոնուելիչ, կալութեան մը պիտի հասնի: Այս աղէտներուն տալիս փոխանակ անհող դանուելու, պէտք է վճարար եւ գործօն ձեռք մը ժամ առաջ վերջ ապա անհամաձայնութիւն հսկուն. թէ՛ վարչական եւ թէ՛ դատական եւ ոստիկանական պաշտօնեաները անհրաժեշտ է որ իրենց պարտականութիւնը գիտակից կերպով կատարեն»

Արիւնոա, տխուր իրողութեան մէջ միակ վստահութիւն կ'էտը, յոյսի հշոյլը թէ՛ կառավարութեան եւ թէ՛ թուրք մամուլին խոստովանութիւնն է իրողութեան ճշմարտութեան, թուրք լրագրութեան վեջնապէս համամիտ գտնուելն է վերջ յայտնուած տարրական ճշմարտութեանց, զորս հայ մամուլը, սկիզբէն ի վեր չի դադարիր յեղեղելէ: Հայութիւնը՝ անկեղծօրէն, ճշմարտապէս օսմանցի՝ հոգեւին փառած է սահմանադրական կառավարութեան, որուն մէջ կը փնտռէ իր բարգաւաճումը՝ ինքնուրոյն կեանքով մը՝ անանջատ Օսմ. հայրենիքին՝ ընդհանուր բարգաւաճումէն: Հաւասարմութիւնը իր սղգալին յատկանիշն է հաւատարմութիւն՝ իր կրօնքին, իր սղգալին՝ ինքնորոշ հկարագրին, իր պապեհական աւանդութեանց, զորս սահմանելու համար արիւնոա դարերու երկար շարքին մէջ չէ վարաներ վայրկեան մը իսկ զոհելու իր կեանքը, յառաջ նետուելու, սրայքարելու, կրօնուելու, ի հարկին արիւնի եւ արցունքի հեղեղներ թափելով, պաշտպանելու համար իր ամենէն նուիրական, սրբագնասուրբ աւանդութիւնները, հաւատարմօրէն կառչած մ'նալով անոնց: Նոյն հաւատարմութիւնը խորունկ արմատներ ձգած է Հայուն սրտին մէջ, այն՝ Կառավարութեան հանդէպ որուն հավանութեան տակ կ'ապրի: Եւ Հայը առաւելապէս, եւ անյեղի կերպով հաւատարմօրէն կը մ'նայ Օսմ.

Սահմանադրական վարչութեան, ո'չ միայն օրով հետեւ ասիկայ իր պապեհական աւանդութիւնն է, այլ՝ մանաւանդ՝ որովհետեւ սահմանադրական գրութեան հաստատման մէջ սղգալի բաժին մը չէր որ ունեցաւ. ինքը, քիչ արիւն չլեւալաց ան, բռնակալութեան ամենէն սրճաւրալից ճգնաժամերուն մէջ տուայտած ըլլալով ինքը՝ ուրիշ ո եւ է ազգէ աւելի:

Եւ հիմա, երբ իր յոյսը որ, աւաղ, շատ խախտած է երկու երեք տարուան սահմանադրական, ադատութեան ջրջանի մը մէջ մեղմացած չտեսնելով դաւառի ոտառապանքը, եթէ երեք վերջնական յոսանքիւման մը փոխուի, ահաւոր պիտի ըլլայ իր յոսանքութիւնը, ահաւոր իրեն համար եւ ընդհանուր երկրին ալ համար:

Հայութիւնը ակնդէտ կը սպասէ որ նմանօրինակ պարագաներու մէջ շուայուած խոստովանելն իրականա: նան: Հայութիւնը կը սպասէ որ անհնազանդ Արաբներուն եւ Առնաւուտներուն դէմ ձեռք առնուած մըջոցնէրուն հաւասար աղբուրութեամբ կրտրուկ միջոցներ ձեռք առնուին երկրին արեւելեան հահանգներուն մէջ ալ, պաշտպանելու համար պատիւի, կեանքի եւ ինչքի ապահովութիւնը: Հայութիւնը կը սպասէ որ երկու չափ եւ երկու կշիռ չգործածուի երկրին ալ կամ այն մասին մէջ, այս կամ այն տարրին հանդէպ: Հայութիւնը կը սպասէ որ ինքը, սահմանադրական ռէժիմին ամենէն հաւատարիմ օժանդակին ու ծառայողը, լիկուող, անպատուուած տարրը չըլլայ:

Հայութիւնը իրաւունք ունի աղբուրէն բողոքելու շեշտուած անիրաւութիւններու, կեղեքումներու դէմ, որ կը գործուին երկրին զանազան կողմերը սփռուած հազար ու մէկ պղտիկ բռնակալներու կողմէ:

Ու իր այս բողոքը պէտք է սովորականէն աւարբեր բան մը ըլլայ, հնարեղածին հանդիսաւոր. ազգեցիկ, ազգին երեսփոխանութեան, աշխարհականութեան ու կղերականութեան կողմէ միահամուռ կերպով կատարուած խաղաղ, բայց հանդիսաւոր ցոյց մը: Հայութիւնը իրաւունք ունի իր ձայնը լսել տալու: Իր պահանջներուն գործադրումը երկրին ալ ճշմարիտ փրկութիւնը պիտի ըլլայ:

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Ս. ԳԻՐԻՔԷՆ ՅՈՒՐԵՐ

ԵՐԵՒՑԱԾ ԲԱՆԵՐԸ

«Զի երեւելիքս առժամանակ մի են եւ աներեւոյթքն յաւիտեանականքս»

«Երեւցածները ժամանակաւոր են, րայց չերեւցածները յաւիտեանականք» (Ք. Կոր. Գ. 18):

Պէտք չէ խորհիլ թէ երեւցած բաները՝ ժամանակաւոր ըլլալնուն համար՝ անկարելի որ են Արդարեւ ո՛չ, եթէ կ'ուզես չերեւցածները տեսնել, երեւցածներուն նայէ. եւ եթէ կ'ուզես գիտնալ յաւիտեանական բաները, լա՛ւ քննէ ժամանակաւորները: Այս է Աստուծոյ կամբքը: «Զոր ակն ոչ ետես, եւ ունին ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելիաց իւրոց» — Այն բաները զորս աչք տեսած չէ, եւ ականջ լսած չէ, եւ մարդու սիրտ ինկած չէ, Աստուած պատրաստեց անոնց որ կը սիրեն զնա» (Ա. Կոր. Բ. 9): Այս համարէն պէ՛տք է հետեցնել թէ Աստուծոյ մեղի համար պատրաստած յաւիտեանական ու չերեւցած բաները աչք տեսած չէ, ականջ լսած չէ եւ մարդու սիրտ ինկած չէ: Ուրիշ կերպ չի հասկցուիր, պիտի պատասխանես: Արդ, կարդա՛ հետեւեալ համարները. «Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով, զի հոգին զամենայն քննէ, եւ զխորս Աստուծոյ . . . նոյնպէս եւ ո՛չ զԱստուծոյն ոք գիտէ. եթէ ոչ հոգին Աստուծոյ, եւ մեք ո՛չ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զհոգին որ յԱստուծոյ, զի ծանիցուք զայն որ յԱստուծոյ շնորհեցաւ մեզ» Աշխարհի մարդը չի տեսներ, չի լսեր, ինչու որ Աստուծոյ հոգիէն վերստին ստեղծուած չէ, նորէն ծնած չէ: Մեզի համար պատրաստուած աներեւոյթ եւ յաւիտեանական բաները Աստուած յայտնած է մեզ իր Հոգիով: Տուած է իր Ս. Հոգին, եւ մեր առջեւ դրած է երեւցած եւ ժամանակաւոր բոլոր բաները, որպէսզի անոնց միջոցաւ հասկնանք, սորվինք չերեւցած եւ յաւիտեանական բաները: Երեւ-

ցած եւ նախական բաները երկու տեսակէտով ալ անհրաժեշտ են. այսինքն թէ՛ այս կէտիցի եւ թէ՛ ապագայ աշխարհին համար: Առանց անոնց չենք կրնար ներկայ կեանքը ապրիլ, ո՛չ ալ յաւիտեանական բաները սորվիլ: Այս կրկնակի եւ կենսական նպատակով Աստուած դրած է զանոնք մեր առջեւ: Աստուծոյ մին կամ երկուքը անտեսել Արարչին նպատակը անտեսել է: Երանի՛ ամոր, որ երեւցածներուն հետին կը տեսնէ չերեւցածները, եւ ժամանակաւորէն քիչ մ'անդին՝ յաւիտեանականը:

Եւ ինչո՞ւ երեւցածները աննշան բաներ սեպուին: Դիտեցէք արեգակը. երկար դարերէ ի վեր նոյն է: Շատ պարզ է. ձայն ձուն չի հաներ. անոր աղաղակը այս հազարաւոր տարիներու միջոցին մէկ անգամ իսկ չլսուեցաւ: Ան իր ճամբէն բնաւ չչեղեցաւ, պաշտօնին մէջ չթերացաւ, երբէք չհպարտացաւ: Եւ անա՛յ պարզ արեգակն է որ ամէն բանի կիսիք եւ լոյս կը պարզուէ: Սակայն կը տեսնենք թէ Աստուած արեգակի նմանցուած է. «Բանզի Տէր Աստուած արեւ ու վահան է» Մինչեւ անգամ թշուառ մարդուն ալ նոյն նմանութիւնը տրուած է. «Եւ իմաստունները երկնից հաստատութեանը լուսոյն պէս . . . պիտի փայլին յաւիտեանս յաւիտենից» (Դան. ԺԲ. 3):

Այս աշխարհը՝ յաւիտեանականութեան պատրաստող դպրոց մըն է: Ո՛ր գիտուն, համալսարանի ո՛ր ուսուցչապետ նախադատրաստական դպրոցի մէջ չկրթուեցաւ, չպատրաստուեցաւ, որպէս զի կարենար բարձրագոյն դպրոց կամ համալսարան մտնել: Նախապատրաստականի մէջ անցուցած ժամանակը պարա՛պ աշխատութիւն էր. հոն սորվածը ոչինչ էր. հոն իր ունեցած գաղափարակները անպիտան էին. բա՛ւ լիցի: Ասոնք էին կեանքի հիմը, առանց անոնց ոչինչ պիտի սորվէր, ոչինչ պիտի գիտնար գիտուն անսա՛ն արժանի:

Այսպէս է նաեւ երեւցած եւ ժամանակաւոր բաներու մասին: Անոնք անհրաժեշտ են մարդն յաւիտեանական կեանքի


պատրաստելու համար՝ Վիշտերն ու տա-
ռապանքները իրենց փոփոխ, ամբողջ ազ-
դեցութիւնը ի գործ դնելու են ամէն ա-
րարածի վրայ, որ կ'ապրի այս արեւին
տակ, եթէ Քրիստոսի համար պէտք էր
«հնազանդութիւն սարվիլ իր չարչարանք-
ներէն», եւ անոնց միջոցաւ կատարեալ
ըլլալ, ո՛րչափ աւելի մենք պէտք ունինք
տառապանք եւ չարչարանք կրելու: Ժա-
մանակաւոր ըլլալուն համար պարտաւոր
բաներ են տանք: Քրիստոս կատարեալ
ըլլալու համար անոնց պէտք ունէր, մենք
իրմէ նուա՞յ պէտք ունինք: Աւանց անոնց
չենք կրնար կատարեալ ըլլալ, եւ տառնց
կատարեալ ըլլալու չենք կրնար երկինքը
մտնել ու յաւիտեանական կեանքը վայելիլ:

Տեսածդ ժամանակաւոր բաները մի՛
անարգիր: Անոնք հիւսն քու ուսուցիչներդ
են թէ՛ այս կեանքին մէջ, եւ թէ՛ հան-
դերձեալ աշխարհին պատրաստելու հա-
մար:

Յովսէփ զեղեցիկ երազ տեսնող մըն
էր: Տարիներով եւ յանրաւի բանտար-
կութիւնը եւ հալածումը, կրած տառա-
պանքներն ու վիշտերն էին որ վերքը
«տառն հազարին մէջ մէկ հատիկ»
ըրին: Փարաւոնի առջեւ ելլելու եւ Ե-
գիպտոսի փոխարքայ ըլլալու համար
բանտի զուռնէն անցնելու էր: ճամբան
ատ էր:

Ազնի՛ւ ընթերցող, թոյլ տուր որ քու
երազ կարծածդ այս աշխարհին մէջ ալ
տառապանքն ու թշուառութիւնը նոյնն
ընեն քեզի: պատրաստեն զքեզ լաւագոյն
աշխարհին համար: Զգուշացիր անձիդ,
հաստատ գիտցիր թէ այս երեւցած աշ-
խարհի մէջ ժամանակաւոր բաներու հեա-
անցուցած կեանքէդ կախուած է յաւի-
տեանականութեան անթիւ դարերու շը-
ջանին ունենալիք գոյութիւնդ:

Ա.Ո.Ա.Ջ.ՈՐԴ.



Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն

ԵՐԱՅԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Բ. (*)

Ս Ա Մ Ո Ւ Է Լ

Մարգարէից Դպրոցները

Այն չրջանը, Դատաւորայ չրջանը, ուր
կը գտնուինք տակաւին, Իսրայելի կրօնա-
կան կեանքէն տեսակէտով ամէնէն ան-
կերպ արան ժամանակն էր արդարեւ: Յա-
կոբի որդիները, տաճարիկու մեծ ու պղզ-
տիկ ցեղեր, երբ արշաւած էին Քանա-
նու երկիրը, ուր անոնցմէ իւրաքանչիւրը
քայլ առ քայլ իր բնակութեան սահման-
ները կը գծէր, բնիկները ջնջելով եւ կամ
իր մէջ ձուլելով: Իւրաքանչիւր ցեղ,
անձնիւր ընտանիք իր հաշուոյն համար
կ'աշխատէր գրեթէ: Շատ քիչ անգամ
մէկէ աւելի ցեղեր՝ չահակցական տեսա-
կէտներէ մղուած՝ կը միանային իրարու:
հետ, կա՛մ վանելու համար հասարակաց
թշնամի մը եւ կամ նոր դաւառ մը գրա-
ւելու: Նոր երկիր մը ձեռք բերելու հա-
մար: Յորդանանու միւս կողմը բանակած
Իսրայելացիք, Ռուբէնի, Մանասէի կէս
ցեղերը, գրեթէ մոռցած էին իրենց ա-
րեւմտեան եւ հիւսիսային արեւակիցները,
եւ կարծես չուտով կորսնցուցած էին
իրենց ինքնայատկութիւնը, ու խառնուած
էին չրջակայ ազգերու հետ: Անոնց բար-
քն ու նախապաշարումները խորապէս
պատուաստուած էին իրենց վրայ: Թուով
սակաւաթիւ, ոչ միայն չէին միանար իս-
րայելեան միւս ցեղերու կռիւներուն(1),
այլ նոյն իսկ չէին կրնար ինքզինքնին
պաշտպանել այն յաճախակի յարձակում-
ներուն դէմ, որոնք ամենէն աւելի տեղի
կ'ունենային այդ սահմաններուն մէջ՝ իւ-
րեւ արտաքին մէկ մասը Պաղեստինի:
Ապրին Եփրեմ, Դան, Իսաքար, Զաբուղոն,
Նեփթաղիմ եւն., իւրաքանչիւրը իրեն

(*) Շար 18րդ. Թիւէն:

(1) Դատ. Ե. 15 16:

համար կամ նոր երկիրներ կը փնտռէր. եւ կամ բնիկներու եւ ուրիշ թափառիկ ցեղերու դէմ կռիւն՝ կը մղէր: Նշանա-
կելի պարագայ մըն է որ Դերովրայի ժամանակ հիւսիսային ցեղերը գրեթէ ամ-
բողջապէս միացած՝ ջանացած էին դի-
մադրել ամենամեծ թշնամիին, Սիսարայի բանակներուն դէմ: Անապայտիք փափուկ (critique) վիճակներու մէջ էր որ մէկ կամ մէկէ աւելի ցեղերու միջնորդութեան գլուխ կը կանգնէին Դատաւորներ, որոնք ազգային ինքնուրոյն սկսելու մը ներ-
կայացուցիչներն էին Հրեայ ժողովուրդին մէջ: Շատ անգամ աստուածային կամքի մը եւ կոչումի մը հնազանդելու համա-
զուումով, ձեռք կ'առնէին անոնք իրենց ցեղին կամ ցեղերուն փրկութեան գործը: Իսրայել իր գիյազնական կռիւները կը մղէր անոնց ձեռքով: Կեսնքի պայքարը, բնական ընտրողութեան (selection natu-
relle) օրէնքը բուն էր ամէնէն աւելի այդ շրջանին: Իսրայել իր ապագայ կեանքին համար կը կռուէր անդիտակցաբար:

Այսպիսի յարափոփոխ կեանքի մը կամ շրջանի մը մէջ թէպէտ գաղափարներու ըմբռնումներու՝ զգացումներու մեծամեծ եւ արժանաւորական յեղաշրջութիւններ տեղի կ'ունենան, եւ սակայն արտաքին անկեր-
պարան երեւոյթ մը կը տիրէ բոլորովին. կրօնական ծէսերն ու արարողութիւնները, օրինակ, ինչպէս քաղաքական բարգաւաճ կեանքի մը բոլոր երեւոյթները, շատ զփութաբերութեամբ ի յայտ կուգան կանո-
նաւոր ու շքեղ երեւոյթով մը: Ընդհա-
կառակն ստացուած նոր ազգեցութիւննե-
րու առկա գրեթէ անտես ու կազմալուծ-
եալ վիճակ մը կը ստանան: Իսրայել, չփութելով ու չափուելով քանոնական ժո-
ղովուրդներուն հետ, անզգալաբար պիտի ազդուէր նոսեւ անոնց կրօնական ըմբռ-
նումներէն, պիտի իւրացնէր զանոնք, եւ թերեւս կրօնական գեղանի վրայ իր ինք-
նութիւնը կ'որոշէր բոլորովին, եթէ իր մէջ չունենար այնպիսի վսեմ տարր մը որ իր կրօնական—ազգային ինքնայատկու-
թիւնը չապահովէր: Եանձէի կրօնն ու պաշտամունքն էր անոնց Եանձէի կրօնը,

ինչպէս այդ կրօնն բնորոշող ժողովուրդը, կեանքի պայքարը կը մղէր իսրայելեան ցեղերու կռիւներուն հետ մէկտեղ: Իրաւ, ժողովուրդը, շրջակայ ազգերուն հետ խառնուելով շատ անգամ սիրալիր կեր-
պով մը կ'ընդգրկէր տեղական աստուած-
ներու կրօնը, մոռնալով իր սեփական Աստուածը, Եանձէի: Բաճաղներն ու Աս-
տաբլները, շատ երկար դարեր մեծ դեր կատարած են իսրայելի կրօնական կեանքին մէջ: Մոռնալով Դատաւորաց զորանքն առաջ, Դատաւորաց շրջաննե-
րուն, իսրայելի ժողովուրդը կարծես կրօ-
նական ներդաշնակութիւնով մը կը վե-
րաբերուէր տեղական աստուածներու եւ անոնց պաշտամունքին հանդէպ: Այդ շրջ-
անի անունները կը մատնեն զայն: Ար-
գարեւ Դատաւորաց շրջանին յատուկ ա-
նուններուն եւ Սաուլի ու Դաւիթ ըն-
տանեաց անուններուն մէջ իսկ յայտնի կը տեսնուի թէ Եանձէի անունին հետ, եւ թերեւս անկէ աւելի, Բաճաղներու եւ Մողոքներու անունները խառնուած են. օրինակ. Յերոֆոօլ (= Այն որ Բաճաղէն կ'երկնչի)(1), Մերօֆոօլ (= Մեծիւրոս-
թէ)(2), Եսֆոօլ (= Յերուսթէ)(3), Բոֆոլ (= Եսսա)(4), Արիֆոֆոլ (= Տէր) եւ Մեֆոֆ (= Թագաւոր) անունները իւրեւ հասարակ ու վերաբեր անուններ կրնային արուիլ: Եանձէի, ինչպէս Բաալիս (= Բաալ = Տէր, Եանձ = Եանձէ) ան-
ունն (7) կազմութիւնը կը մոտենէ, եւ սակայն քանոնական աստուածներու ան-
ունն այս ասանց իւզճահարութեան գոր-
ծածութիւնը կը ցուցնէ թէ այն շր-
ջաններուն մէջ Եանձէի պաշտամունքը խառնուած էր նաեւ կռոյ պաշտամուն-

(1) Գաւ. 2 32: Benan H. J. T. I. P. 198, 319:

(2) Ա. Մնաց. Բ. 34:

(3) Ա. Բ. 33: Բ. Թգ. Բ. 8-11. Գ. Գ.

(4) Ա. Բ. Գ. 7:

(5) Գաւ. Բ.

(6) Ա. Թգ. ԻԲ. 11.

(7) Ա. Մնաց. ԺԲ. 5:

քին հետ Բայց Եանվէն նախանձոտ Աստուած մըն էր. արդար չէր հանդուրժել որ իր պաշտօնը ուրիշ տաստեածներու աշտամունքովը պղծուի. Եանվէն պիտի յաղթանակէր անշուշտ Իսրայելի ազգային Աստուածը, շուտով ուրիշ ցեղերու Աստուածը պիտի ճանչցուէր՝ իրրեւ արարիչ ու արդար. Եւ այս պիտի կատարուէր Եանվէի հաւատարիմ ու անձնուէր պաշտօնասէրներուն միջոցաւ, Մովսէսի, Դերովրայի, Գեղէնի, Հեղիի, Ամուէլի, Աստուծոյ մարդոց, մարգարէնեաներուն միջոցաւ:

Արդարեւ Եանվէի կրօնին ծաւալման մեծագէտ նպաստած են նաեւ Իսրայելի Քահէնները (= քահանայ), բայց անոնց դերը, բողոքամամբ տեսանդներու՝ մարգարէներու մեծ գործունէութեան, կարի անշան բան մը եղած է, եւ թիւիւս ինչ ինչ կէտերու մէջ ալ վնասակար Քահէնը, ինքնին ծիսակատար անխօսուի մարգարէներնայ մը, կարելի չէր համեմատել Եանվէի նախանձախնդրութիւնովն ու ոգիովը լեցուած այն տեսանդներուն, որոնք հրէական կրօնի ճշմարիտ առաքեալները եղած են ինչ գրեթէ մէջ, Իսրայելեան քահանան ու տեսանողը բնորոշող նկարագիրներուն զուգակշիռն ընել՝ կ'արժէ որ ուրիշ ոչ նուազ կարող աստուածաշնչագէտի մը թողունք, որուն խօսքերուն վրայ շատ բան մ'աւելցնելու պէտքը չպիտի տեսնենք. «Հրէական կրօնը, թէեւ մարմնական, արարողական, թերի, կը բովանդակէր սակայն, դէթ սաղմնային վիճակի մէջ, տաստեածային ու ճշմարիտ կրօնի մը բովանդակ սկզբունքը: Հոգին կրնար չըջիլ անոր ձեւերուն մէջ. հոգի չէր ան բոլորովին, բայց չէր մերժեր երբեք զանոնք, որ այդ հոգին կ'աւետարանէին. Քահանայութիւնը մովսիսականութեան ոսկրուտ կմխքն էր կարծես: Մարգարէութիւնը անոր սիրտն էր նոյն իսկ, եւ արիւնը որ չըջան կ'ընէ անոր երակներուն մէջ, կը կենդանացնէ իր բոլոր անցած վայրերը: Քահանայութիւնը խողովակը, ջրանցքն էր, բայց մարգարէութիւնը ջուրն էր որ կը

լեցնէ զայն ու կը պաղարկէ իր անցած գաշտերը: Քահանաներու պաշտօնը տեւական էր ու շարունակական. մինչ մարգարէներունը վայրկեական, ժամանակաւոր, անհատական. տաղիները կ'ուսուցանէին իրենց դորձերով, մինչ վերջինները՝ խօսքով. առաջինները աւելի արտաքինը կը դիտէին, մինչ միւսները՝ ներքինը. բարուց ուղղութիւնը քահանայութեան յանձնուած էր, մարգարէները սրտի վերանորոգութիւնը կը փնտռէին աւելի (1), Հաստատութիւն մը (institution), կամ աւելի ճիշտը երեւոյթ մըն էր այս, ոչ թէ ապօրինաւոր, այլ արտաքոյ-օրինաց (extr légale), պարագաներու արտադրութիւն մը, քարոզութեան տարական պաշտօն մը կանոնաւոր պաշտօնին մօտիկ, անկախ քարոզիչներ՝ պաշտօնական կղերին մօտ: Օրէնքը սրտի թլփատութեան կը ձգտէր, կ'ուզէր լեցնել հոգին Աստուծոյ սիրովը, սրբել զայն, զայն կազմել ու կազմակերպել ի պատկեր Աստուծոյ: Այս վերանորոգիչ ոգին կը թափանցէր բոլոր ըմբռնումներուն մէջէն, Մովսիսականութեան բոլոր բազմաթիւ ու զանազան մանրամասնութիւններուն մէջէն, կարծես կ'ուզէր սպաւորուիլ բոլորին սրտին մէջ կենսական գիծերով, եւ անոր ամէնէն անբիծ, ամէնէն ճշմարիտ, ամենէն բեղմնաւորիչ արտայայտութիւնը կը գտնուի մարգարէութեան մէջ (2):»

Հրեայ քահանայութիւնը, տառնց մարգարէութեան, չպիտի կրնար բարձրանալ անշուշտ Դատաւորաց Ժամանակի Եանվէի քահանաները տեսակ մը քուրմեր զարձած էին, որոնք ուրիշն ու քուրմիմը կը կրէին, Գեղէնի շինել տուած եփռողին կը ծառայէին (3), Մովսէսի թուր՝ Յովնաթան՝ Միքայի մը շինել տուած ոսկի արձանին (= Եանվէին կուռքին) քուրմը կ'ըլլար (4), Հեղիի երկու որդիները՝ Ուրիի

(1) Բ. օր. Ժ. 16. 1, 2 հն.:

(2) J. — Aug. Bost. Dict. de la Bible, art. Prophetes, P. 735:

(3) Դատ. Բ. 27:

(4) » ԺԲ. 30 Հմեմել ԺԷ. և ԺԸ. զլուսններն ամբողջ:

և փենեկէս, «որդիք ժանտք» էին որք երեքժանի մասհաններով Տէրոջը զոհե-
րուն վրայ կը յարձակէին (1), որք «ննջե-
ցուցանէին զկանայս ուխտաւորս առ զբան
խորանին վկայութեան» (2), Այսպիսի քա-
հանայութիւն մը չէր կրնար Յահլիի
պաշտամունքին պահապանն ըլլալ: Պէտք
էր ուրիշ ոյժ մը, ահիլի բարձր ու զօրա-
րաւոր նկարագիրներ, ճշմարիտ գործիչներ:
Պէտք չէ զարմանալ, ուրեմն, երբ Հեղիի
թոյլ ու մեղկ դատաւորութեան քովիկ
կը բռննի զօրաւոր կամք մը, Յահլիի
կրօնքին ու պաշտամունքին ճշմարիտ հա-
ւատարիմ ու նախանձախնդիր մը, Սա-
մուէլը կ'ըսուի թէ՛ թէ՛ քահանայ մ'էր
ան և թէ տեսանող մը թերեւս անոր
միակ արժանիքը իր տեսանողի գործու-
նէութեան մէջ կը կայանայ:

Անշուշտ, եթէ մարգարէական ոգին ու
գործունէութիւնն ունեցած չըլլար ան, շատ
մեծ արժանիք մ'ունեցած չպիտի ըլլար
քան Հեղի, որուն որդիներուն նման իր
գաւազներն ալ, Յովէլ և Աբիա, պատիւ
չպիտի կրնային բերել իրենց հօրը տուած
թոյլ դատարարականութեան (3):

ԳԵՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

(1) Ա. Թգ. Բ. 12, 13:

(2) « » 22:

(3) Անգ. Բ. 2-5:

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ տարեգարձի
հանդէսին միջոցին Հոգաբարձութեան ան-
դամ Օհանես Լ. Գ. գեղեցիկ անակնկալ մը
ըրաւ, ծանուցանելով թէ Գարակէօզեան
խնամակալութիւնը 4000 սովիի գնած է
Պէպէք բնագործակ ապարանք մը, որ Ուր-
բանոցի պիտի վերածուի 8-10 տարիէ ի վեր
կապաւորէր այս անակնկալին, որով վեր-
ջագէս կարելի պիտի ըլլայ Հիւանդանոցի
ախտաբոյր մթնոլորտէն աշտտեղու ազ-
դին թշուառ որբերն և որբուհիները:

ԵՐՈՒՍԱԼԷՄԻ կառավարչին փոխա-
նորդը Բ. Դուռ կը հեռագրէ թէ անցեալ
հինգշաբթի Համարձման իերան վրայ սե-
ղանի մը խնդրոյ համար կախ մը ծագեր
է Հայկերու և Յոյներու միջեւ, և բա-
ւական ծանր հանդամանք տանելով, հորկ
եղած է ջոկատ մը զինուոր բերել կախին
առաջը առնելու համար: Կր սպասուի
մանրամասնութեանց, ճշգրիտ համար Հա-
յոյ գիրքը այս խնդրոյն մէջ:

ՕՐՈՒԱՆ ՏՕՆՐ

Բրիտանէա. Թեան մեծ ու խորախորհուրդ տօնը,
զոր կը կատարէ վաղը Հայ Ս. Եկեղեցին,
Հոգւոյն Սրբոյ գալուստն և Էջն ի Ս.
Առաքեալն, եթէ մէկ կողմէ վսեմագոյն
էջեր ներշնչած է Եկեղեցւոյ Ս. Հայրերուն,
միւս կողմէ առիթ տուած է սկսկախներու
կասկածաւ վերաբերում մ'ունենալ Վերնա-
տան մէջ կատարուած շնորհարարչութեան
և լեզուախօսութեան հրաշալի խողովածեան
վրայ Հեղինակաւոր գրէք մը այդ իրողու-
թեանց վրայ հմուտ ծանօթիւն մը ներ-
կայացնելու փափաքով, յառաջ կը բերենք
Օրմանեան Սի Համապատումէն էջ մը, ուր
մասնաւորապէս լեզուաց շնորհին վրայ կը
խօսուի այնքան համովչ և դիրքահասկնալի
ոճով մը. —

ԼԵԶՈՒԱՑ ՇՆՈՐՀԲԸ

Գործ. Բ. 4—13

Յատկապէս ուղեցիրք զատել և ա-
ռանձին խօսիլ Հոգւոյն գալուստն առնի
անդի ունեցած երբորդ հրաշալիքին վրայ,
որ է այլ և ոչ լեզուներ խօսելու երե-
ւոյթը. որովհետեւ թէ՛, իսկութեամբ կը
տարբերի նախընթաց երկու հրաշալիքնե-
րէն՝ որ նիւթական բնութեան կը պատ-
կանէին, և թէ շատ աւելի խնդիրներու
տեղի տուած է եղելութեան գովաւորա-
կնձիւն լինելուն պատճառով: Մենք այս
լեզուաց չն յիշքին բնականորէն յիշուիւնն
ու պարզարանութիւնը պիտի չընենք, այլ
Պենտեկոստէի օրումն հրաշքին ստմանին
մէջ պիտի մնանք, ինչպէս կը պահանջէ
Համա գաղտնիքն ան պատկեր: Որովհետեւ
գիտենք թէ լեզուաց չնորձքը ուրիշ ա-
ռիթներով ալ տեղի ունեցաւ Եկեղեցւոյ
մէջ, սակայն այն անգամներուն մանրա-
մասնութիւնները չէն համապատասխաներ
Պենտեկոստէի եղելութեան հանգամանք-
ներուն, և շատ լաւ կրնանք տարբերու-
թիւններ բնորոշել տարբեր եղելութեանց
վրայ: Գիտենք ևս որ Եկեղեցւոյ մէջ
լեզուաց չնորձքը անտեղութեանց կամ
զեղծմանց ալ տեղի կը յառ տալ, որոց
գէմ Պօղոս գրեց կարնիմացոց թուղթին
մէջ, բայց ապագային տեղի ունեցած

զեղծունիները պատճառ չեն նախնական եւ նշանաւորագոյն եղելութեան մը խաւթիւնը մերժելու։ Այս դիտողութիւնները կարեւոր էին մեր գրելիք պարզաբանութիւններուն խմատը ճշգրիտ համար։

Սրբազան պատրիարքը կ'ըսէ որ հնչիւնի ձայներուն եւ հնչուն լեզուներուն հրաշալի երեւոյթին հետ, ամենեւեալ, որոնք վերնատունի մէջ հաւաքուած էին, առաքեալներ եւ աշակերտներ եւ իւզաբերներ, յցան Հոգւով Մրքով, նոր եւ երկնային շնորհք մը ստացան, եռանդին բոլորքեցաւ, իղձերնին արծարծեցաւ, սիրտերնին քաջադիւրեցաւ, եւ սխալ խօսիչ յայր շեղուաւ, իրենց գիացած լիզուէն դուրս ու տարրեր լեզուով մը խօսիլ ոչ թէ իւրաքանչիւր իւր ուզած լեզուն որոշելով եւ դործածելով, այլ ներքին ներշնչման ազդեցութեան ներքեւ։ Խօսիլ այն լեզուով, որպէս եւ Հոգին տալի քարոսողն անցաւ իսկ խօսածնին ոչ պատմութիւն էր եւ ոչ եղելութեանց բացատրութիւն, եւ ոչ իսկ նոր հաւատքին քարոզութիւնը, այլ միայն օրհնաբանութիւն եւ վառաբանութիւն ուղղել Աստուծոյ, պարգեւած շնորհներուն հանդէպ գոհաբանութեան մաղթանքներ, որովհետեւ կը խօսէին զԱնծառնեմ Աստուծոյ։

Հնչիւնը եւ բոցերը եւ լեզուախօսական հրաշալիքը լուսեցան ամէն կողմէ։ Եկն միաբան քաղմութիւնն խոնկեցաւ վերնատունին շուրջը։ Երուսաղէմ լեցուն էր միշտ, ոչ միայն Պաղեստինացի ճանապարհներով, այլ եւ աշխարհի ամէն կողմ սփռուած ու սրբուած Հրէայ գաղթականներով եւ հրէութեան եկերով, այժմէն հրէական կրօնքը ընդունողներով, որոնք չէին կրնար իրենց Երուսաղէմը մոռնալ, եւ շարունակաբար ուխտաւորներ եւ այցելուներ անպակաս էին, մանաւանդ զԵւթաւոր ասորերու ասորիներուն, Չափկին, Պենտեկստէին եւ Տաղաւարահարցին։ Նոյն օրն ալ Երուսաղէմ այդ բազմատեսակ բողոքութիւնը կտր եւ մանաւանդ ապր անոր ըսելը, թէ «Բան մը կ'ըսեն որ չենք իմանար, լեզու մը կը խօսին որ

չ'որ հասկնար» այն տեղ հաւաքեց զԵւթաւորաբար գաղթականութիւններէ եկած Հրէաները, եւ հրէութեան յարող հեթանոսները, որ եկի կը կոչուէին Սրբազան պատրիարքը այդ գաղթականները յիշելու առթիւ զանազան երկիրներու անունները կուտայ, ինչպէս են, Պարթեւք, Մարք, Իլամացիք, Միջագետք, Հրէաստան, Գամիրք, Պանտոս, Ասիա, Փոնդիա, Պամփիլիա, Եգիպտոս, Լիբիա, Կիւրենէ, Հոռոմ, Կրետէ եւ Արաբիա։ Ընդամենը ասանովեց զանազան գաղթականութիւններէ եկողներ, եւ նոյնչափ տարրեր լեզու գիտցողներ։

Այս տեղ պզտիկ եւ միջանկեալ դիտողութիւն մը վերը նշանակուած աշխարհագրական անուններուն վրայ։ Անոնց շարքին մէջ յայտնապէս տեղագրական կարգ մը կը տեսնուի, որ արեւելեան ամենահեռու Պարթեւաց աշխարհէն կուգայ դէպ յառաջ, եւ Մարաց ու Իլամացեաց այսինքն Պարսից երկիրները յիշելէն ետք, կը հասնի Միջագետք, եւ Հրէաստան մը յիշելով, Փոքր Ասիոյ երկիրներուն կ'անցնի, որք են Գամիրք կամ Կապադովկիա, Պանտոս, Ասիա որ է Յոնիա, Փոնդիա եւ Պամփիլիա, այս մասն ալ աւարտելով կ'անցնի Եգիպտոս եւ անոր շրջականները Լիբիա եւ Կիւրենէ, եւ ամենէն վերջը մնացեալ ցրիւ աշխարհներ, Հոռոմացեաց կողմերը՝ որ է Իտալիա, Կրետէ եւ Արաբիա։ Այս շարքին մէջ ինչ որ աչքի կը դարնէ, Միջագետքի եւ Կապադովկիոյ մէջտեղ Հրէաստանի յիշատակութիւնն է, որ ոչ այդ երկու երկիրներուն մէջ կը գտնուի, եւ ոչ ալ հրէական գաղթականութեան կամ օտարաբնու բնակչութեան երկիր կրնայ ըսուի։ Միջագետքի եւ Կապադովկիոյ մէջ ինկող երկիրը Հայաստանն է, եւ Ափրիկեան Եկեղեցեոյ նշանաւոր Հայրերէն Տերտուղիանոս եւ Օգոտարիոս, որք Սուրբ Գրոց ամենահին եւ Իտալեան կոչուած Թարգմանութիւնը գործածած են, այդ հասունածը բացատրած ատեննին, իրօք Հրէաստան անունին տեղ Հայաստան կը գտնուի։ Այդ ընթերցումը աշխարհագրական տեսա-

կէտով կ'արդարացնէ սրբազան պատմիչին պահած կարգը, պատմական տեսակէտով Հայաստանի մէջ Հրէայ գաղթականութիւն դանդաղելովը կը հաստատուի, եւ եղեւթեան պահանջմամբ օտար լեզու մը յիշուած կ'ըլլայ, մինչ առաքեալներուն Հրէաստանի լեզուն խօսիլը, ոչ հրաշալիք էր եւ ոչ զարմացում կրնար պատճառել: Այլ թէ ինչպէս բոլոր սովորական օրինակներու եւ թարգմանութեաց մէջ Հայաստան անունը Հրէաստան անունի կրցեր է փոխուիլ, մեր նպատակէն դուրս է բացատրելու աշխատել:

Պատմութեան կարգին դառնալով, այս ամէն գաղթականութիւններէ ելող անձեր, կը յիշատակուին իբր Հրէայ եւ Արֆ երկիրացիք, որ երբ վերնատունի աշակերտներուն ունկնդրութեան կը վազէին. ու շեխն յիւրաքանչիւր լեզուս խօսիչ նոցա, այլալմէ եղած եւ անակնկալ եղեւթեան առջեւ շուարած, սխալանային եւ զարմանային, եւ իրարու դառնալով եւ զիրար հարցափորձելով, երգոր կը ստուգէին թէ ամէն մի տեսակ խօսողին իմացող մը կար, եւ բոլորովին անձանօթ լեզու մը խօսող չկար, ասեին ընդ միմիանս, «Չէ՞ որ ասոնք ամէնքը Գալիլիացիներ են, ախար եւ անուս Հրէաներ, հապա ինչպէ՞ս կրնան խօսիլ այն օտար լեզուներով զորս մենք սորված ենք ու գիտենք, այդ օտար երկիրներու մէջ ծնած եւ ապրած ըլլանուս համար: Ինչպէ՞ս կրնան ասոնք իրենց չգիտցած ու չսորված լեզուներով Աստուծոյ ուղղուած գեղեցիկ փառաբանութիւններ խօսիլ, ինչ կերպով պէտք է մեկնել այդ տարօրինակ երևոյթը» Երբոր մէկ կողմէն երկիւղած գաղթականներ խօսուածները իմանալուն համար ապշած ու շուարած էին, եւ եղեւթեան բացատրել կը չփոթէին, անդիէն Երուսաղէմացի Հրէաներ, որ օտար լեզուներ չէին գիտեր, եւ խօսուածները չէին իմանար, եւ չիմանալուն համար, աշակերտները՝ բերանին եկածը դուրս տուց իւր աննշան աղաղակ բարձրացնողներ կը սեպէին, ծաղրելով կը խնդային անոնց վրայ, թէ

խոցուալից իցեն, եւ արքեալ իցեն, խօսածնին չգիտցող գինովներ են:

Հրաշալի եղեւթեան պատմական կողմը պարզաբանելէ ետքը, անոր բացատրութեան եւ քննադատութեան մասին տեղի ունեցած խնդիրներէն եւ տեսութիւններէն գոնէ զխաւորները, որչափ հնար է համառօտակի քաղենք:

1. Ըսողներ եղան թէ լեզուաց չնորհքը ոչ ենթակայական էր խօսողներուն վրայ, այլ առարկայական լսողներուն վրայ. հրաշքին եզրը ոչ թէ աշակերտաց լեզուն էր որ տարբեր լեզուներ կը խօսէր, այլ ունկնդիրներուն ակամար, որ աշակերտաց իրենց լեզուով խօսածը, գաղթականներ իրենց գիտցած լեզուով կը հասկնային: — Եղեւթեան հրաշալի ըլլալը չէր գաղեր իմէ այդպէս ալ իմանայինք, միայն թէ սրբազան պատմիչին միտքէն հեռացած կ'ըլլանք, որ կ'ըսէ թէ սխալ խօսիչ յայլ լեզուս, եւ ոչ թէ ունկնդիրներ սխալ խմանալ յայլ լեզուս, Մանաւանդ որ պէտք չէ ենթադրել թէ գաղթական Հրէաներ բոլորովին իրենց լեզուն մոռցած էին, այլ հարկաւ գաղթականութեան մէջ ալ իրենց մայրենի լեզուն պահած էին, եւ բնաւ առիթ չկար որ մայրենի լեզուով խօսուածը օտար լեզուով իմանային:

2. Ըսողներ եղան թէ լեզուաց չնորհքը պէտք չէ երբեք տարբեր եւ օտար լեզուներ խօսելու վրայ մեկնել, որովհետեւ լեզուաց կամ լեզուի չնորհք ունեցած կրնայ ըստիլ նա ալ, որ ճարտար եւ առատ եւ արագ եւ ազգու եւ յուզիչ եւ հմուտ լեզուով կը խօսի, ունկնդիրները կը գրաւէ, եւ յիւթիչ տպաւորութիւն մը կ'ազդէ: — Այս ալ հրաշալի եղեւթութիւն մը եղած կ'ըլլար. եթէ իրօք այս ըլլար Հոգւոյն ազգեցութիւնը աշակերտաց վրայ, որ տկար ու սղէտ Գալիլիացիները յանկարծ աննման հռետորներու փոխարինելո՞ւ Սակայն պատմական պարտադաներ շատ հեռու են այս ենթադրութեանէն, որովհետեւ գաղթական Հրէաներ շեխն յիւրաքանչիւր լեզուս խօսիչ նոցա, եւ ոչ թէ միայն անոր համար որ խօսէին

զմեծամեծս աստուծոյ, զի այս կէտերն ալ՝ իմեր լեզուն խօսուած կը լսենք կ'ըսեն:

Յ. Ի լեզուն խօսելու շնորհք ունենալ հիմնովին ազաւազելով, կ'ուզեն յաշանակ եւ անխնայ ձայներ հանելու վերածել, լեզուն եկած ձայնը դուրս տալ, մոլեգնածի պէս ձայներ հանել, եւ լեզուով խօսիլ նիւթապէս եւ ոչ թէ լեզու մը խօսիլ — Այդ բացատրութիւնը ոչ միայն անարգական է աշակերտաց՝ որ խօսեցան, եւ Հոգւոյն Սրբոյ՝ որ ճայր բարբառել անգա, ալ եւ չենք իմանար թէ ինչ հրաշալիք կ'ընայ ենթադրուելի խնթութեամբ ձայնարձակութեանց մէջ: Եթէ կային լեզու չգիտցող Հրէաներ, որ բան մը չիմանալուն յայլ լեզուն խօսողները փայցուալից, այսինքն է քաղցուով կամ դինիով զգոտած կը կարծէին, բայց կային ալ օտար լեզուներ պիտոյնէր, որք անկեղծաբար կը վկայէին յիշաւանջիւր լեզուն խօսել անգա:

Է. Խնդիր է թէ ինչ լեզուով կը խօսէր իւրաքանչիւրը, որովհետեւ կարծիք է թէ իւրաքանչիւրը սկսաւ խօսիլ այն երկրին լեզուն, ուր որ քարոզելու պիտի երթար: Ըստ այսմ մեր Լամբրոնացին խօսքը մասնաւորելով կ'ըսէ, թէ Պետրոս Լատիններէն կը խօսէր, Փիլիպպոս արաբերէն, Յովհաննէս կիլիկերէն, Թովմատ եթովպերէն, Թադէոս հայերէն, Բարթոլղիմէոս մարերէն, ուրիշներ ալ հելլեներէն եւ պարթեալերէն: — Սակայն ոչ մի նշան չունինք պնդելու թէ այսպիսի յարարութիւն մը եղած ըլլայ իւրաքանչիւրին խօսած լեզուն եւ իր քարոզութեան երկրին մէջ, որովհետեւ չենք ալ կրնար ըսել թէ հարկաւ գացած աեղերնուն լեզուով քարոզեցին, մինչ իրենց հրէարէնը բաւական էր հրէայ գաղթականութեանց հետ խօսելու, եւ յունարէնն ալ մնացեալ ազգութեանց հետ յարաբերութեան մը տեսելու:

Ը. Այդ պատճառով եւ ոչ իսկ կրնանք պնդել թէ իւրաքանչիւր աշակերտ աեռաւ զարար պահեց այն լեզուն հմտութիւնը, գորայդ օր խօսեցաւ: Այն օրուան հրա-

շարժումը բացատրել երեւոյթ մըն էր, նման հնչիւնի ձայներու եւ հրեղէն լեզուներուն. եւ ինչպէս հրեղէն լեզուն որ մասաւ իւրաքանչիւր ի վերա անգա, միշտ անոնց զխօսն վրայ տեսնելի եւ զգալի չմնաց, նայնպէս ալ պէտք չունինք ըսել թէ անգամ մը խօսած լեզունին մինչեւ վերջը խօսեցան:

Թ. Միեւնոյն պատճառով չենք կրնար ըսել, թէ իւրաքանչիւրը իւր ուղիւ լեզուով կրցաւ խօսիլ, բնորութիւնն ինքն ընելով, եւ շնորհքը երկինքէն ընդունելով: Սրբալստ պատմիչը յատակ կերպով կը շեշտէ այդ պարագայն երբոր կ'ըսէ, թէ կը խօսէին յոպէս եւ Հոգին ճայր բարբառել անգա:

Դ. Կը խնդրուի եւս թէ ինչ կը խօսէին Եթէ առջեւնիս եզող հատուածը ուսումնասիրենք, պիտի ըսինք թէ խօսանին վարդապետութիւն եւ քարոզութիւն եւ քրիստոնէական հաւատքի բացատրութիւն չէր, այլ պարզապէս Աստուծոյ ուղղուած օրհնութիւններ, զի այս է խօսիլ զմեծամեծս Աստուծոյ, որ է զԱստուած մեծացուցանել եւ փառաբանել, նորա կատարած հրաշալի գործերուն յիշատակութեամբ:

Ե. Այլեւայլ լեզուներ խօսողներ կ'իմանային արդեօք ըսածնին, գիտէին ինչ ըսածնին, կամ թէ կ'ըսէին ինչ կ'ուզէին: Այս ալ խնդիր եղած է մեկնիչներուն մէջ, եւ մեծագոյն մասը կը կարծէ թէ քանի որ հրաշալի երեւոյթի մը բնութիւն ունեցող հրաշք մըն է, եւ ուրիշներուն տպաւորութեան եւ ոչ թէ իմացողութեան սահմանուած միջոց մը, բնաւ անհրաժեշտ չէ խօսողին գիտակցութիւնը եւ կամակցութիւնը պահանջել, եւ թէ յայլ լեզուն խօսողը պարզապէս յաիշտակուածի եւ վերին ազդեցութեան ներքեւ գործողի գերը կը վարէ, եւ ոչ պատասխանատու գործողի մը վիճակը:

Զ. Վերջապէս անոնք որ լեզուաց շնորհքին նշանակութիւնը ուրանալով զայն պարզապէս խելկատակ ցուցադրութեան կարգը կ'ուզեն խօսեցնել, իրեն

իր փաստ կը ծառայեցնեն Պօղոսի գրածները (Ա. Կորն. ԺԴ.), ուր լեզուաց շնորքը անօգուտ ցուցնելու կ'աշխատի, իբր չփոթութեանց եւ դայթակլութեանց պատճառ, եւ այդ շնորհքին կիրառութեանէն զգուշանալ կը հրամայէ: Հարկաւ այս տեղ Պօղոսի թուղթին մեկնութեամբ պիտի չլքաղինք: Բայց չենք իմանար, թէ ինչ փաստ կրնայ քաղուիլ վերնատունի հրաշքին դէմ, եթէ յիս ժամանակաց այդ շնորհքը կեղծ ձեւակերպութեանց եւ անտեղի զեղծմանց առիթ ստաւ Կորնթոսի մէջ, եւ առաքելաւոր պէտք տեսաւ արմատական դարմաններու գիմել տիրող զեղծումները խաղաղ ջնջելու: Կամար Միթէ որ եւ է սկզբունքին կամ գործին կամ շնորհքին զեղծումը, կրնայ ստել անոր իսկականը, կամ թէ ոչնչացնել անոր ու գիղը ու ճշմարիտը: Ընդհակառակն ոչ մի բանի կեղծն ու զեղծը չկրնոր տեղի ունենալ, եթէ անոր իսկն ու ճշմարիտը եղած չըլլայ: Այդ քանի մը դիտողութիւնները բառական ըլլան, ոչ թէ լեզուաց շնորհքին մասին վարդապետօրէն խօսած ըլլալու, այլ պարզապէս հոգեգալստեան օրուան հրաշալի երեւոյթները հանդա՛մանօրէն բացատրած ըլլալու համար:

ՄԱՂԱՔԻԱ ԵՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԻՆ ԷԶԵՐ

Մեծապէս հոգեշահ պիտի ըլլայ՝ Հոգեգալստեան ներշնչող տօնին առթիւ՝ քարեպաշտ ընթերցողին Թարգմանարար Ներկայացնել Գառնած մը Հայ Ս. Եկեղեցւոյ երանաշնորհ Հայրապետներէն Ս. Ներսէս Լամբրոնացւոյ խորիմաստ եւ ընդարձակ աղօթքէն, որ կը կարդացուի վաղը իրիկուն: —

Այս առաւօտ երկնաւոր Հայրը երկիր նայեցաւ, զանիկա կշտացուց Ս. Հոգիին յորդառատ գետովը, և փթթելով ծագկեցուց առաքինութեան զանազան բոյսեր՝ արմատներու բազմապատիկ տունկերէն, ինչպէս կ'ըսէ մարգարէն: Ահա ձիւք մը որ չի չափուիր, եւ պարգեւ մը որուն չի գուգակցիր գործերու կշիռ մը: Ահա

տուրք մը որուն բնութեան իսկութիւնը չի պարփակուիր, և շնորհք մը որուն գերազանց մտքի զեղումը չի սահմանուիր: Ահա՛ առաւօտ ողորմութիւն մը որուն քով աշխարհի բոլոր թագաւորութիւնները փոքր կը գտնուին, և մխիթարութիւն մը որուն մարմնաւոր ուրախութիւն չի լծւր: Դուրս: Որովհետեւ ո՞վ կրցաւ աշխարհի տիրելով անապականութիւն ալ ստանալ, կամ ո՞ր թագաւոր կրցաւ ձեռնարկել մահը կեանքի փոխելու, կամ ո՞ր մարմնաւոր երջանութիւնը կրցաւ յաւիտենական կեանքն ընդգրկել: Իսկ սա՛ սյս ր առաքեալներու դասուն վրայ իջնելով, անոնց բաղուկները զօրացուց ընդհանուր տիեզերքին բաշխելու: Որովհետեւ անոնք ասով լեցուելով՝ Ստուերով հիւանդներ բժշկեցին, թաշկնակով ցաւեր փարատեցին, ձեռքով մեռելներ յարուցին, կաղեր քաղեցուցին, կոյրեր լուսաւորեցին՝ աւելի հոգիի քան մարմնոյ աչքերը, զմարդիկ երկինքն հրաւիրեցին եւ անվախճան փառքի ժառանգորդներ ըրին: Ահա՛ ուրեմն յայտնուեցաւ թէ երկրաւոր ոչ մէկ բան երկնային տուրքերու հաւասար գըտնուեցաւ: Ոչ միայն բանականներու ազգը անոր ընդունակ գտնուեցաւ, այլ և անշունչ տարրեր՝ ասով զօրանալով՝ մարդոցմէ վեր գտնուեցան: Նոյն ինքն Ս. Հոգին իջնելու պանն, նախ տունը լեցուց սքանչելապէս, և յետոյ այնտեղ սիրով նստողներուն վրայ հանգեցաւ: Որովհետեւ կ'ըսէ թէ Պենտեկոստէի օրերը լրանալուն, ամէնքը միաբան միասին էին, և յանկարծ երկինքէն հնչելն մը գալով սաստիկ հովի նման, լեցուց իրենց նստած տունն ամբողջ. և անոնց երեւցան բաժնուած լեզուներ իբրեւ թէ կրակէ ըլլային, որ անոնց իւրաքանչիւրին վրայ նշատաւ. և ամէնքը լեցուեցան Ս. Հոգիով, և սկսան խօսիլ այլ եւ այլ լեզուներ, ինչպէս որ Հոգին խօսիլ կուտար անոնց: Ամէնքը միաբան եւ միասին էին, կ'ըսէ, որպէս զի ցուցնէ թէ միայն տասնեակութները չէին, այլ Աստուածածին կոյան ալ անոնց հետ էր, այն կիներուն հետ միասին որոնք Յիսուսը կը պաշտէին:

Գալիլիոյ մէջ, և ականատես եղան Յարութեան: Հոն էին եօթանասուններու գունդը բոլոր ծանօթներու հետ մեկտեղ,

Հոգին Սուրբ անոնց վրայ եկաւ, Քրիստոսի առաջուրնէ տուած խոստումին համաձայն, որ քսած էր. ԲՏԱ՛ եւ ձեզի կը զրկեմ հօրո աւետիսը, դուք նստէք Երուսաղէմ քաղաքը, մինչև որ զօրութիւնը հապնիք բարձունքներէն: Նոյն Հոգին որ սկիզբէն կը շրջէր ջուրերուն վրայ, լեցուց տունը իմանալի զօրութիւնով, և զգալի տեսակ մը կրակով՝ տղտարարոյներու սքանչացման համար: Յետոյ այդ կրակէն բաժնուեցան լեզուներ որ հանգչեցան Առաքելներու իւրաքանչիւրին վրայ, որով կը նշանակէր այլատարազ լեզուախօսութեան շնորհքի պարգեւը: Ուստի երբ տեսանելի հրեղէն լեզուները հանդիպեցան անոնց զգալի մարմնոյն զգալարանաց վրայ, անոնց միտքը իմանալի զօրութիւնով իմաստանանալով, սկսաւ անոնց լեզուները շարժել զանազան բարբառներով. — որովհետեւ կ'ըսէ թէ այլ և այլ լեզուներով կը խօսէին, ինչպէս որ Հոգին անոնց բարբառել կուտար: Ոչ թէ որովհետեւ լեզուախօսութեան շնորհքը նախամեծար էր, այլ որովհետեւ ուրիշ նշան մը չկար հրատարակելու այն շնորհքը որով զօրացան: Իսկ այլ եւ այլ լեզուներ խօսելով՝ քաղաքին ամբողջ բազմութիւնը հիացած մնաց անոնց վրայ, որովհետեւ, կ'ըսէ թէ ամբողջ բազմութիւնը միասին խոնուեցաւ, և ամէնքն ալ կը ռքանչեանային ու կը զարմանային. մինչ ուրիշներ սքանչելի այլափոխումը ծաղրելով կ'ըսէին թէ գինովցած են:

Արդ, որպէս զի ամենքն ալ այսպէս գիտնան Աստուածային շնորհքը, Հոգին իջած ատենը շնորհործեց անոնց՝ Քրիստոսի խոստումը, այլ լեզուները: Որովհետեւ անիկա չքսաւ թէ լեզուներ պիտի խօսիք հոգով, այլ թէ պիտի սորվեցնէ ձեզի, և պիտի յիշեցնէ ամէն ինչ որ քսի ձեզի: Անոնք եթէ ասիկա առած ըլլային սկիզբէն, այսպէս ամբոխեալ չպիտի ըլլային, եւ իրենց այլեւայլ լեզուներով խօ-

սելուն հետեանքով բազմութիւնը իրենց չպիտի քաշէին, զիրենք տեսնելու համար: Ասոր համար ամենիմաստը նախ զարմանալի փոփոխամբը շփոթեցուց զանոնք, ինչպէս մանուկները՝ ինձպքի խաղերուն մէջ: Որովհետեւ անոնք երէկ և այսօր Գալիլիացի գոհհիշինականներ էին, ահա-ւասիկ՝ կ'ըսեն՝ հելլենացի իմաստուններու նման կը ճարտարաբանին, եւ ուրիշներ՝ պարթեական տարաշխարհիկ բարբառով անոնց կը պատասխանեն:

Պետրոս որ կափառնայում ծնած է, կը լսենք որ Հռոմէական լեզուին մէջ կ'արշաւէ խորխալով: Եւ Փիլիպպոս որ Գալիլիացուց Բեզսայիտայ քաղաքէն էր, արարացուց բարբառով կ'արտասանէ իր խօսքերը: Յովհաննէս որ Նազարէթի մէջ ծնած է, ինչպէս Նիկիեցիներու լեզուով հարցումներ կ'ընէ մեզի. Իսկ Թովմատ, կը լսենք որ Եթովպացիներու լեզուով մարգարէին խօսքերը կը յիշեցնէ: Թադեոսն այն տխմար, տեսէք, որքան վայելուչ կերպով Հայոց մեծաց բառերով կ'ըսէ իր խօսքերը: Եւ Բարթողէմէոսն մանուկ, որպէս թէ Մարաց մէջ ծնած ըլլար, անոնց լեզուն կը հնչեցնէ:

Ո՛վ սքանչելեացս, մենք զանազան գաւառներու մէջ ծնանք, և աշխատութեամբ անոնց լեզուները սորվեցանք, և ահա ասոնք որ այն քաղաքները տեսած չեն բնաւ, առանց աշխատութեան անոնց լեզուով կը խօսին: Մեծ է, կ'ըսեն, այս սքանչելիքին արուեստը, բայց չենք կրնար ըմբռնել թէ ինչ բանի պիտի յանգի:

Այնպէս, Պետրոս տասնըմէկներուն հետ ելնելով, ձայնը բարձրացուց, և սկսաւ տարակոյսներուն լուծումը շնորհել:

Ո՛վ հրէաստանցիներ և Երուսաղէմ բրնակողներ, ասիկա թող յայտնուի ձեզի, մտէք ըրէք իմ խօսքերուն: Այս արբեցութիւնը գինիի արբեցութիւն չէ, օրուան երրորդ ժամուն, ինչպէս դուք կը կարծէք, այլ բաժակ է բերկրութեան, և հաւաստիք մը՝ անապականութեան: Մարգարէներով գուշակուած խորհուրդ մը այսօր իր լրումը կը գտնէ: Ո՛վ օրէնուսողներ և մարգարէներու աշակերտներ,

ասիկա ձեր միշտ կարդացած Յովելի գուշակածն է որ կատարուեցաւ : Արովհետեւ ահա վերջին օրերուն Աստուած իր հոգիէն լեցուց Կանազան մարմնաւոր հասակներու վրայ և կը մարգարէանանք : Այն Յիսուս Նազովրեցին որ ձեզի երեցաւ ն աններով և արուեստներով, և տառապարտ կերպով խաչուեցաւ, երկինք ելաւ և Աստուծոյ աջ կողմը նստաւ, ու Ս. Հոգիին այս պարգեւը Հօրմէն ընդունելով մեր վրայ սրբութեց : Անիկա երբոր երկինք կը համբառնար, մեզի ուխտեց, և երկինք մանելով և Հօր ու Հոգւոյն հաւասար նստելով, այսպէս բնաւ. — Ես այն գործերը զոր դուք ինծի վստահեցաք, կատարեցի երկրի վրայ : Այլ Հայր իմ, քու անունդ փառաւորեցի մարդոց մէջ : Չարին մահանքներով զեղծանած մեր պատկերակիցը մեր աստուածային բնութեան մէջ խառնելով սրբեցի սքանչելապէս իմ մահս տալով ողորմելի և տառապեալ մարդկային ազգին : Համար, զանոնք զերծ ըրի անէծքէն, և հիմա նոյն մարմնով գալով՝ երկրպապագութիւն կ'ընդունիմ երկնաւորներէն : Բո՛ւ գործելու ժամանակդ եկաւ, ո՛վ իմ փառակից Հոգի, դուն ալ պէտք է քու մարդասիրութիւնդ ցուցնես երկրի վրայ : Այսուհետեւ քեզի՝ կը յանձնեմ՝ մարդոց վէջ յարգել տալ մեր աստուածութեան անունը : Իմ հայրս ներեց և թողուց պարտքերը, որով դուն խափանուեցար անոնց վրայ սիրուելէ՝ իմ՝ մարմնոյս պատարագովը : Սա զիս անոնցմէ առհաստա չեայ ընդունեց, և զքեզ կուտայ անոնց փաղաղութեան համար : Իջի՛ր, հիմա, ո՛վ սիրոյ աղբիւր, սիրով անոնց վրայ իջիր, մխիթարէ զանոնք որ պանդխտութեան վայրին մէջ նժդհ հաւանքաւոր կեանքով կը սառապին : Դարձո՛ւր զանոնք այն նանրութիւններէն, — որոնցմով ի դուր կը խռովեցնէ զիրենք թշնամին, — նայելու այս բազմապատիկ օթեւանները զորս պատրաստեցինք անոնց : Բաշխէ՛ անոնց առատ իմաստութիւն, որպէս զի եղբունագործը չմոլորեցնէ զանոնք : Անոնց պէտքերուն հազորդ գանուեցայ և փորձով ճանչցայ որ տկար և դիւրակործան բնութիւն մը


վիճակած է իրենց : Այս պատճառով, կ'ազալեմ՝ անոնցմէ անրաժան եղիր, և զօրացո՛ւր զանոնք ումէն փորձանքներու դէմ : Տկարացուր մարմնի կամքը, և զօրացուր մտքի՝ կամքը : Քեզի՝ կուտաւ, քեզի կը յանձնեմ զանոնք, դքեղ խոստացայ անոնց : հիմա քեզմով կը զօրացնեմ՝ ամէնքը, որպէս զի զուր տեղը չերթայ անոնց համար իմ թափած արիւնտ : Առատացուր անոնց մէջ, ո՛վ իմ համագոյակից Հոգի, բժշկութեան շնորհքը, մարգարէութեան շնորհքը, վերին բաները խորհելու և ստորին բաներն պատելու շնորհքը : Ես թէեւ չատանգամներ երկնքի արքայութեան վրայ ճառեր կը խօսէի անոնց, սակայն սիրով ահանջ չէին տար : Բայց երբ մարմնական բժշկութիւններ կը կատարէի, մեռելներ կը յարուցանէի, կաղեր կը քալեցնէի, կոյրեր կը լուսաւորէի ամենուրեք սէրը կ'աճէր իմ վրայ : Հոգիներու հացը, իմաստութեան խօսքերը կուտայի, ու ոչ ոք կը զգաստանար : Բայց երբ մարմնի հացը տուի առատապէս որպէս զի կշտանան, այնչափ սաստկացաւ իրենց սէրը իմ վրայ, որ կ'ուզէին զիս յափշտակել ու թագաւոր ընել :

Այս է մարդկութեան վիճակը : անկարող են իրենց խոստացուած վերին բարիքին վրայ խորհելու : Ծանօթ չեն երկնային փառաւորութեան, այլ միշտ երկրի վրայ կը յաճին : Կարծական բան մը կը նկատեն այս ճշմարտութիւնը և անոնց համար վայելուչ կեանքը անիկայ է : Այս պատճառաւ դուն անոնց տղայամետութիւնը նախ զարմացուր նշաններով և սքանչելիքներով, և բժշկութեան շնորհիւ ուղղէ անոնց կարծիքներն ու հաւատքը : Անարգել բաշխէ քու առատութեան շնորհքդ մեր աստուածութեան փառքին ու գովեստին համար : որպէս զի ինչպէս որ երկինքի մէջ է, այնպէս ալ երկրի լեցուի մեր աստուածութեան փառքովը : և հրեշտակներու նման մարգիկն ալ ըլլան մեր անունները օրհնաբանող : Զարմանալի չէ եթէ մեր մոլորեալ արարածները մեր բազմապատիկ զօրութիւնովը նուաճենք : Աւստի իջիր կա-

դաշնման իջի՝ որովհետեւ տարակոյսը պաշարած է դանոնք: Մահուան տնօրէնութեան պահունքն քիչ մը ժամանակ մտնեցայ անոնցմէ, և երկունքը՝ ծննդականի նման պաշարեց իմ աշակերտներս, մինչև որ իմ յարութիւնս երազելով մխիթարեցի զանոնք: Տասնըմէկներէն մէկը հոն չէր, և առաջ հոգիներուն վկայութեամբն ալ չէր հաւատար յարութեան, մինչև որ դարձեալ յայտնուեցայ անոնց և կողերուն խոցուածքը շօշափել տուի, անոր մտքին մէջ հաւատքը զօրացնելու համար: Եւ հիմայ, դէպ ի երկինք իմ ծամբորդութեանս ատեն անոնց կարծածութիւնը թող չի վհատի քու մխիթարութեան յոյսէդ: ասոր համար փութայ մխիթարէ իմ որդեակներս և աշակերտներս. գնա, հանգչէ անոնց վրայ, ինչպէս խոստացայ իրենց, և յիշեցուր անոնց բոլոր իմ կողմէ ըսուածները:

Այն ատեն ամենակարող զօրութիւնը, փրկական առատութիւնը, հեղութեան ազդերը, բարութեան հոգին, մարդասէր շնորհքը, Աստուծոյ առատութեան հեղումը, կենդանարար բղխումը, Ան՝ որ մարդարէներէն քարոզուած էր, կը սլանար կ'անցներ ահազ որոտումով անմարմնական հրեշտակներու դասակարգերու մէջէն, և երկնային զօրքերու նահապետութիւնները յապուշ կը կրթէին հիացումով. որովհետեւ ինչ որ ընդ ազօտ կերպով նշմարել կը ցանկային, տեսան որ իր իսկական էութեամբը մարդկան ազգին վրայ կը գիմեր ու կը սփռուէր: Որովհետեւ սուրբ Հոգիին ամբողջ անձնաւորութիւնը այսօր իջաւ առաքեալներու դասուն վրայ, ինչպէս միածինը՝ Ս. կոյսին արդանդը: Եւ Ան որ եկաւ ալ չմեկնեցաւ, իր փեսային անսուտ խոստման համաձայն թէ ձեզի հետ պիտի բնակի և ձեզի հետ պիտի բլլայ յաւիտեան: Անիկայ զօրացուց այսօր առաքեալները, և անոնց մատակարարութեամբը ընդհանուր տիեզերքը:

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԵՅԻ



ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ազգ. Ժողովը ազմկալից նիստ մ'առնեցաւ անցեալ Ուր. օր Գաւառի հարստահարութեանց վրայ նոր եւ յուզումնալից վիճաբանութենէ մը ետքը, սրուն տխուր այժմէութիւն մը կ'ուտար Բաղէշի ութ սպանութեանց լուրը, կատարեց վարչական Ժողովոյ համեմատականի մնացած ընտրութիւնները. յետոյ անցաւ Եկեղեցի. երեսփոխանաց ընտրութեան մասին Նախաձեռնութեան Դիւանի սեղեկագրին, Թերթիս ծառայելի ներքեւ մանրամասնօրէն մէջ բերել վիճաբանութիւնները, որոնք շատ լուռն եղան: Ուշագրտուր, այդ վիճաբանութեանց մէջ, սահղաւ ըստ մեզ որ նախորդ Համազումարին ձախող մէկ ընթացքը՝ խնդրոյ առարկայ եկեղեցական մը երեսփոխան ընտրելու մասին, առիթ տուաւ եկեղեցականութեան շուրջը յարուցանելու ոչ պատուաբեր ազմուկ մը եւ պաշտօն դառնալու նոր վարկաբեկութեանց: Միհրդատ էֆ. Հայկազն յայտարարեց թէ Երեցեան Սրբազանի ընտրութիւնը չի կրնար վաւերացուիլ, քանի որ անիկա Ազգ. Ժողովէն դատապարտուած է հազար ոսկիի մոխումի եւ 103 ոսկիի զեղծումի համար: Պալագեան Վ. աւելի ծանր ամբաստանութիւններ ըրաւ. կարգաց հանգուցեալ Յարութիւն Պատրիարքի մէկ նամակը, որով Ե. յեան Ս. կամբաստանուէր իբր վանքի Սամ. կանաւարութեան կասկածելի ցոյց տուող յայտնեց նաեւ թէ 1906ին կազմուած Կերօն. Ժողովի անդամներէն վեց հոգի՝ Տ. Տ. Վահրամ, Գրիգորիս եւ Դաբրիէլ Ս. ներքեւ, Ղեւոնդ Վ. Դուրեան Սահակ Քչն. Տ. Սարգիսեան (Իբր Իզմիրլեանի ուսուցիչ), եւ ինքը (Գրիգորիս Վ.) կառավարութեան կողմէ կախակալուեցան Կէօչէ Օղլուի ժողովարան վրայ, եւ նոյն օրերուն նոյն ինքն Երեցեան Ս. Դուրեան Հայր Սուրբի համարձակ կը յայտարարէր թէ ինքը աւելի տուած է նոյն եկեղեցականաց առնունը: Պալագեան Վ. յիշեց վերջապէս թէ երբ պաշտօնաւոր ըլլալով իրեն կը յաջոր-

դեր Զիլինկիրեան Վ., այս վերջինը Պոլիս հասած օրը Ա. իր. Տրիպոլիս սքսորուելու համար մինչև Տարտանէյ ետ գարձուեցաւ, եւ հազիւ կարելի եղաւ զինքը Պոլիս բերել : Պարագեան Վ. ցաւելով յայտնեց ասոնք, եւ մենք ցաւելով կ'արձանագրենք : Բայց աւելի ցաւելին տեղի ունեցաւ ժողովին մէջ : Արշակ Էֆ. Ալպոյաճեան՝ համակրելի գրաւէտը որ ատաջին անգամ ներկայ կը գտնուէր իբրեւ երեսփոխան, (եւ այդ նիստին մէջ իսկ ցոյց տուց թէ ժողովին լաւագոյն ատմանաբաններէն մէկը կոչուած է ըլլալ), ուրիշ շատ կարեւոր եւ օրինական դատողութիւններու հետ մէկտեղ, սա ծանրակշիւ յայտարարութիւններն ըրաւ . —

« Թրինակոն եւ անձի խնդիրներէն դուրս կը մընայ մեծ սկզբունքի մը խնդիրը, որ ամենէն կարեւորն է ինծի համար : Այս ժողովէն դուրս եւ անկէ վեր ուրիշ հեղինակութիւն մը չկայ Թուրքիոյ Հայոց համար : Հայ Եկեղեցւոյ կազմակերպութեան եւ դարաւոր սկզբունքներուն դէմ է աշխարհականաց հեղինակութենէն բարձր բռնել կղերին հեղինակութիւնը : Արօնական ամեն գործոց մէջ աշխարհականները ձայն եւ հեղինակութիւն ունին, ու Ազգ. ժողովէն վեր իշխանութիւն չունի կղերը, այլ անոր ստորագասն է : Համագումարին այս ընտրութիւնն անս մեծ ապէս կը հարուածէ Ազգ. ժողովին այս մեծ հեղինակութեան, քանի որ կղերը գրեթէ միասնաբար քուէով մեզի պաշտօնակից տալ կ'ուզէ մէկը որ այս վերին մարմինէն մերժուած է ասկէ առաջ (Ծախեր) : »

Մենք իրաւացի չենք գտնել Ալպոյաճեան Էֆ. իր այս յայտարարութեանց մէջ, որովհետեւ վստահ ենք թէ հայ կղերին մէջ մէկ հոգի իսկ կարելի չէ գըտնել որ Ազգ. ժողովոյ հեղինակութեան հարուած տալ սեղէ : Հայ կղերը, հին դարերէ ի վեր, նոյն իսկ վարդապետական խնդրոց կարգադրութեան համար անհրաժեշտ նկատուած է աշխարհական տորքին մասնակցութիւնը, հետեւապէս ամենաբուն կերպով կը բողոքենք այդ գաղափարին դէմ, միեւնոյն ատեն ցաւ յայտնելով որ Ընտր. ժողովին մէջ Երէցեան Ս. ի համակրներուն կողմէ մղուած բրօքականութիւն հետեւանք՝ վարակաւեղելու ծառայեց ոչ միայն նոյն Սրբազանը, այլ եւ ամբողջ Հայ եկեղեցական

նախնիներ : Ահաւորիկ անխոհմ եւ անշղթահայեաց շարժումի մը բնական հետեւանքը : Ժողովը փակուեցաւ ոչ տանն, ատանց որոշում մը կարենայ արուելու :

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՈՑ ԱՄԲՈՂ-
ՋԱՅՈՒՄԸ. — Ազգ. ժողովը անցեալ ուրբաթի նիստին մէջ կատարեց Վարչութեան երկու ժողովներուն համեմատական փոփոխած անդամոց ընտրութիւնը : Դադ. Ժողովոյ անգամ ընտրուեցան, Տեաք՝ Արաշէս Ֆնտղեան, Երուսնդ Խօրասան, Դէսրգ Շնորհքեան, եւ Գրիգոր Ֆէրհաս : Իսկ Կրօն ժողովի անգամ ընտրուեցան Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպիս. Դուրեան, Յովհ. Ս. Արքեպ. Արշարունի, Դեմոք Ծալապոյն Վարդապետ Դուրեան Սահակ Ա. քնն. Պետրոսեան, Հմայեակ քնն. Էքս'րճեան, Եղիազար քնն. Պօղոսեան, Գրիգոր քնն. Ճէպէճեան եւ Արքահամ քնն. Էպէսեան :

* * * Վարչութեան ժողովները ուրբաթ օրը կը զուարուսին իրենց դիւանները կազմելու, եւ իբրեւ անմիջական խնդիր՝ նկատողութեան տանելու Ազգ. ժողովէն Դաւաններու մասին եղած հարցումները : Վերջին օրերուն մէջ եղած ձեռնարկներու մասին տեղեկութիւն ստանալէ ետքը պիտի որոշեն թէ նոր զիմուսի պէտք կա՞ն թէ ոչ :

* * * Այս ամթիւ գոհունակութեամբ կը ծանուցանենք որ նախորդ Կրօն. ժողովը Մայիս 11ի նիստին մէջ պատշաճ դատած է թերթերու մէջ հրատարակել Տ. Տիրայր Մ. Վ. իր Ս. դիւանադպրութեան պաշտօնին հանգամանքով միայն Կրօն. ժողովոյ ընտրելիութենէ հրամարիլը :

ԱՅ-ՍԹԵՑԱՆՈՍԷՆ Եւստիփան ընտրուած է Վսեմ. Գէսրգ Էֆ. Ասլանեան :

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔԵՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

54870 1.048

ՄՏԱՑՈՒՄԸ ԳԻՐՔԵՐ

ԼՈՒՌ ՑԱԻԵՐ. — Դր. Զօհրապ. — Երրորդ շաբաթ մը սրամիտ հեղինակին գեղեցիկ նորավէպերուն, հատորի մը մէջ ամփոփուած, զին 7 ու կէս շրջ. կամ 1. 75 ֆր.:

ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐ. — Օր. Մաննիկ Գ. Պերպերեան. — Մեծահուն ուսուցչապետին գուստրը սիրուն հատորի մը մէջ ամփոփած է իր բանաստեղծական զգայուն քմայքները, Տպագր. Արաքս: Դին 4 շրջ.:

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ Պ. ՊԱԼԵՆՑ ԴՐԱՏԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Ռուս աշխարհահռչակ հեղինակին ԹՕԼՍՏՈՅԻ լաւագոյն գործերէն մին, թարգմանուած Գնունի, Մախաս եւ Եր. Օտեանի կողմէ: Երեք հատոր 20 շրջ.:

ԱՆՆԱ ՔԱՐԷՆԻՆԱ. — Ռուս աշխարհահռչակ հեղինակին ուրիշ մէկ գլուխ գործոցը, որ Եր. Օտեանի գեղեցիկ աշխար-

հաբարով կը հրատարակուի Պալենց գրատան կողմէ: Հրապարակ ելած է Ա. հատորը, Բ. հատորն ընդ Մամլով: Դին երկու հատորին 15 շրջ.:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ. — Հայուհին. — Հեղինակին լաւագոյն նորավէպերէն մէկ քանին հատորի մը մէջ ամփոփուած, ուր հայ կեանքի սառապանքը կը պատկերացուի սրտայոյզ էջերու մէջ: Գին 5 շրջ.:

ԱՐԱՄ ԱՆՏՕՆԵԱՆ. — Շիրվանզահ. — Կենսագրական նոթեր իր գրական գործունէութեան յորելեանին առթիւ: Գին 100 ֆր.:

ՏԻՐԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ. — Առաջնորդ ընթերցանութեան եւ քարգլ. Անգլ. լեզուի. — Դիւրին եղանակ Անգլ. լեզուն կարգաւ, գրել եւ խօսելու համար Բ. տարի Գին 5 շրջ.:

ԹԵՐԶԵԱՆ. — Նոր ֆրանսէ փրան-ներեն, ի պէտս հայ ուսանողաց. — Գին 60 ֆարա: